ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ. կայք՝ www. artik.am

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2024 թվականի N 2534-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՆԱ ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մատակարարման մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած անհատ ձեռնարկատեր Աննա Յուզբաշյանը/այսուհետ վաճառող/, ում հետ պետք է կնքվեր «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար հացի մատակարարման գնման պայմանագիր: անհատ ձեռնարկատեր Աննա Յուզբաշյանը գրություն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան սույն թվականի դեկտեմբերի 16-ին, սակայն վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց, ինչպես նաև գնման բոլոր գործընթացներից և չի պարտավորվում ներկայացնել ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6 –րդ կետի ենթակետով, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Միևնույն ժամանակ ընթացակարգի հրավերի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը /այսուհետ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունը/ մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ուսումնասիրելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետի պահանջները և հիմք ընդունելով «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի սահմանված գնահատող հանձնաժողովի կողմից տրված 2024 թվականի դեկտեմբերի 17-ի զեկուցագրով անհատ ձեռնարկատեր Աննա Յուզբաշյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացրած փաստը

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը անհատ ձեռնարկատեր Աննա Յուզբաշյանին (ՀՎՀՀ 57384876 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գ. Գուսաննա 1-ին փողոց) ներառյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:

2. Անհատ ձեռնարկատեր Աննա Յուզբաշյանին ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

անվանում	ՀՎՀՀ	գործունեության հասցե	խախտվել է գնման գործընթացը	որպես ընտված մասնակից	համայնքի ղեկավարի որոշումը
Ա/Ձ Աննա Յուզբաշյան	57384876	ՀՀ ՇՄ գ. Գուսաննա 1-ին փող	Խախտվել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները	Հրաժարվել է պայմանագիր կնքելուց	19.12.2024թ-ի թիվ 2534 որոշման

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կնքման օրվանից:

Գնումների օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, 4-րդ կետի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2024 թվական դեկտեմբերի 19